ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՋՀ-ՊԸԱՇՁԲ-16/3 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «17» օգոստոսի 2016թ.

2016թ-ի օգոստոսի 17-ին՝ ժամը 15:30-ին, Հայաստանի զարգացման հիմնադրամի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեում, տեղի ունեցավ ՀՋՀ-ՊԸԱՇՁԲ-16/3 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Լուսինե	Հովհաննիսյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի արտահանողների աջակցության բաժնի մասնագետի ժ/պ.
Անահիտ	Մկրտչյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի արտահանման զարգացման և խթանման բաժնի մասնագետի ժ/պ.
Ալեքսանդր	Նազարյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի կազմակերպատնտեսական հարցերով մասնագետ.

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Անի	Բազեյանը	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի գնումների մասնագետ - քարտուղար:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լուսինե Հովհաննիսյանը, իսկ քարտուղարն էր՝ Անի Բազեյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՋՀ-ՊԸԱՇՁԲ-16/3 ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց և վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման մասին:
2. Մասնակցի կողմից առաջարկված գնի (գների), առաջին տեղ զբաղեցրած մասնակից որոշելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ՀՋՀ-ՊԸԱՇՁԲ-16/3 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ և ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Լուսինե Հովհաննիսյանը նշեց, որ գնման առարկայի 1-ին չափաբաժնի ընդհանուր (նախահաշվային) գինը կազմում է 1 500 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղար Անի Բազեյանը հայտնեց, որ՝

• ՀՋՀ-ՊԸԱՇՁԲ-16/3 ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձիք (այսուհետ՝ նաև մասնակից).

Հ/h	Մասնակցի անվանում	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«ՊԵՐՍՈՆԱ ԳՐԱՏԱ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Բայրոնի 5
2.	ԱՐՄԱՆ ՕՐԴՅԱՆ	ՀՀ, ք. Երևան, Վրացական 4-րդ նրբ., 7շ., բն. 33

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

• մասնակիցները հայտերը պարունակող ծրարները կազմել և ներկայացրել են ՀՋՀ-ՊԸԱՇՁԲ-16/3 ծածկագրով պարզեցված ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերի (այսուհետ՝ հրավեր) պահանջներին համապատասխան, բացառությամբ «ՊԵՐՍՈՆԱ ԳՐԱՏԱ» ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված հայտը պարունակող ծրարը չի համապատասխանում Հրավերի 2-րդ մասի 5.2 կետի սահմանված պահանջներին, այն է՝ ընկերության ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշված չէ Պատվիրատուի անվանումը:

• Արման Օրդյանի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը,

• Արման Օրդյանի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին,

Որոշվեց՝

1. Լուսինե Հովհաննիսյանի և Անի Բազեյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Արման Օրդյանի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:
3. «ՊԵՐՍՈՆԱ ԳՐԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

2. ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ (ԵՐԻ), ԱՌԱՋԻՆ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակիցը ներկայացրել է հետևյալ գները՝ առանց ԱԱՀ.

Չափա-բաժնի համարը	Աշխատանքի անվանումը	Մասնակցի անվանումը և առաջարկած գինը (ՀՀ դրամ)
		Արման Օրդյանի
1.	Գովազդային արշավի հետ կապված ծառայություններ (հոլովակ)	1,350,000

Որոշվեց՝

1. ՀԶՀ-ՊԸԱՇՁԲ-16/3 ծածկագրով ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել Արման Օրդյանին:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 49-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 15:30-ին:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Հովհաննիսյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Մկրտչյան _____

Ա. Նազարյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Բազեյան _____